

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ

Վարկ՝ 4265-AM

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

Սույն հետաքրքրություն ցուցաբերելու հրավերը հաջորդում է տվյալ ծրագրով հրապարակված Գնումների Ընդհանուր Օանուցմանը, ինչը զետեղված է եղել **“Development Business”** պարբերականի 2007թ. հունիսի 16-ի թիվ 704 թողարկման մեջ:

Հայաստանի Հանրապետությունը Միջազգային Զարգացման Ընկերակցության կողմից ստացել է վարկ, իսկ Ճապոնիայի կառավարության կողմից դրամաշնորհ՝ Դատաիրավական բարեփոխումներ երկրորդ ծրագիրը իրականացնելու համար, և մտադիր է այդ միջոցների մի մասը ուղղել այդ ծրագրով նախատեսված պայմանագրերով վճարումներ կատարելուն, մասնավորապես, Հայաստանի մի շարք մարզերում դատարանների շենքերի կառուցման և կապիտալ վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու առաջադրանքները կատարելու նպատակով, որոնց վերաբերյալ մանրամասները նշված են ստորև: Սույն ծրագիրը կհամաֆինանսավորվի նաև Հայաստանի Հանրապետության կողմից:

Դատարանների շենքերի կառուցման և վերակառուցման որակի տեխնիկական հսկողության պահանջվող ծառայությունները ներառում են շենքերի կառուցման ընթացքում մշտական տեխնիկական հսկողության իրականացում, կատարված աշխատանքների որակի և ծավալների հավաստում, նախագծային փոփոխությունների առաջարկների կազմում և եզրակացությունների կազմում, պատվիրատուին անհրաժեշտ հաշվետվությունների ներկայացում և այլն հետևյալ վայրերում իրականացվող շինարարական աշխատանքների համար.

- Արարատի մարզի Մասիս քաղաքում
- Լոռու մարզի Ստեփանավան, Տաշիր և Սպիտակ քաղաքներում
- Շիրակի մարզի Մարալիկ ավանում
- Տավուշի մարզի Բերդ քաղաքում
- Սյունիքի մարզի Գորիս և Մեղրի քաղաքներում
- Վայոց Ձոր մարզի Վայք և Եղեգնաձոր քաղաքներում
- Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում
- Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում

Նշված վայրերում առաջադրանքները նախատեսվում է կատարել 2008-2011թթ. ընթացքում, առնվազն 12 ամիս ժամանակահատվածում, կապված տվյալ վայրում շենքի կառուցման կամ վերակառուցման բարդությունից:

Ելնելով նշվածից, ներկայումս «Դատաիրավական բարեփոխումներ ԾԻԳ» ՊՀ-ը առաջարկում է բոլոր իրավասու խորհրդատու կազմակերպություններին, այն է՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպություններին ցուցաբերել իրենց հետաքրքրությունը նշված ծառայությունները մատուցելու նպատակառկայությամբ: Հետաքրքրված խորհրդատու կազմակերպությունները/տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունները պետք է տրամադրեն տեղեկատվություն, որով կարտացոլվի նրանց իրավասությունը նման ծառայություններ մատուցելու համար (կազմակերպության նկարագիրը, իրականացված նմանատիպ առաջադրանքների նկարագրությունը, նման աշխատանքների կատարման փորձը, ներգրավվող աշխատակազմի որակավորման տվյալները և այլն): Ի լրումն նշվածի, հետաքրքրություն ցուցաբերելու նամակին պետք է կցվեն կազմակերպության պետական գրանցման փաստաթղթերի, ինչպես նաև առկայության դեպքում՝ շինարարական, նախագծային կամ յալ համանման պետական լիցենզիաների լուսապատճենները: Իրավասու խորհրդատու կազմակերպությունները պետք է հստակ նշեն վերը նշված ցուցակից մեկ կամ ավելի առաջադրանքներ և վայրեր, որտեղ նրանք հետաքրքրություն են ցուցաբերում մատուցել խորհրդատվական ծառայություններ: Խորհրդատու կազմակերպությունները կարող են գործել նաև համատեղ՝ որակավորման պահանջներին բավարարելու նպատակով:

Խորհրդատու կազմակերպությունը ընտրվելու է Համաշխարհային Բանկի կողմից 2004թ. մայիսին ընդունված «Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների Ընտրություն և Վարձում» Ուղեցույցներ- ի պահանջների համաձայն:

Հետաքրքրված խորհրդատու կազմակերպությունները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ ստորև նշված հասցեով յուրաքանչյուր աշխատանքային օրվա ժամը 9:00-ից մինչև 18:00:

Հետաքրքրություն ցուցաբերելու գրությունները պետք է առաքվեն ստորև նշված հասցեով մինչև 2008թ. մարտի 30-ը ներառյալ:

«Դատաիրավական բարեփոխումներ ԾԻԳ» ՊՀ
Արթուր Թունյան, տնօրեն
Թումանյան փող. 21/1, Երևան, 0001 Հայաստան
Հեռ.։ +37410-520885 լրաց. 104
Ֆաքս՝ +37410-520885 լրաց. 104
Էլ. հասցե՝ jrcpi@arminco.com